ՀՀ Կառավարության աոընթեր Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչություն

ՀՎՀՀ՝ 26018483

ՀԾՀ՝ 1409840778

Սուրեն Ռաֆայելի Օհանով

անուն, ազգանուն, հայրանուն

ք. Երևան, Սաֆարյան փ., 16/4

հաշվառման /բնակության/ հասցե

Հայտնում ենք Ձեզ, որ համաձայն ՀՀ ՊԵԿ մաքսային մարմինների կողմից ստացված տեղեկությունների՝ Ձեր կողմից 01.03.2021թ. ԵԱՏՄ անդամ պետությունից ՀՀ տարածք են ներմուծվել ՀՀ կառավարության 13.02.2020թ. թիվ 171-Ն որոշմամբ սահմանված ակնհայտ առևտրային չափաքանակը գերազանցող ապրանքատեսակներ:

Համաձայն <<Մաքսային կարգավորման մասին>> ՀՀ օրենքի 249 հոդվածի 6-րդ մասի՝ վերոնշյալ գործարքը հանդիսանում է ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծում. համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 59-րդ հոդվածի 6-րդ մասի՝ անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք ձեռնարկատիրական գործունեության նպատակով իրականացվող ներմուծման գործարքի դեպքում պարտավոր են Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում հաշվարկել և պետական բյուջե վճարել այդ գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները:

Համաձայն հարկային վարչարարության ընթացքում հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից 17.06.2021թ. կազմված թիվ 32212/2021/ԿՈՒՎ4/Ա արձանագրության՝ Ձեր կողմից չկատարած հարկային պարտավորությունը 17.06.2021թ. դրությամբ կազմել է 623.481 դրամ, որից հարկ՝ 609.583 դրամ, տույժ՝ 13.898 դրամ:

Տեղեկացնում ենք, որ համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետում չկատարելու դեպքի առթիվ, ի կատարումն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների՝ առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11-ին ներկայանալ վարչական վարույթի նախնական լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և/կամ առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87 ա: Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժնի առաջատար մասնագետ՝ Digitally signed by JAGHATSPANYAN *Լ. Ջաղացպանյան*

հեռ.՝ 011-54-91-91/91-68/

30/Հլս/2021